

Քիւ 25858  
Յունիս 15, 1978

Մեծայարգ  
Տիար Թարութիւն Զարդարեան  
Մանուկեան Հանգստեան Տուն  
Միշիկըն.

Յարգելի Տիար Զարդարեան,

Տիար Կարօ Գազազեանէ ստացած ենք Մայիս 8, 1978  
թուակիր նամակ մը, որով կը տեղեկացնէ թէ Մանուկեան  
Հանգստեան Տան մէջ Հայերէն գիրքերու ծրարներ ունի  
եւ զանոնք կը նուիրէ Առաջնորդարանիս:

Տիար Գազազեան կը տեղեկացնէ նաեւ որ այս մասին  
խօսած է ձեզի հետ:

Ընորհակալ պիտի ըլլանք ձեզ առջին առիթով այս  
գիրքերը, որոնց ցանկը Տիար Գազազեան տուած է իր նա-  
մակին մէջ, բարի ըլլաք զրկել Առաջնորդարան:

Այն յոյսով որ շուտով պիտի լսենք ձեզմէ, ձեզի կը  
մաղթենք հոգիի ու մարմինի առաւել առողջութիւն եւ ձեր  
բարի գործերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԶԵՊԻՍԿՊՈՍ  
Առաջնորդ

Օրինակ՝ Հոգշ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիբեանի